ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/50

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ջրային կոմիտե
Մասնակից՝ «Վարուխ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վարուխ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրերով գնանշման հարցում, ՀՀ Արմավիրի մարզի նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2019-2020 գրությամբ «Վարուխ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ջրային կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.02.2020թ. թիվ 03/17/299-20 և 13.02.2020թ. թիվ 03/17/418-20 գրությունների հիման վրա, 14.02.2020թ.-ին «Վարուխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 14.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/50 համարի ծածկագիրը և 14.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

21.02.2020թ.-ին և 06.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.03.2020թ.-ին:

2. ՀՀ ջրային կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ջրային կոմիտեն 03.02.2020թ. թիվ 03/17/299-20 և 13.02.2020թ. թիվ 03/17/418-20 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլը.

«Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը տեղեկացնում եմ, որ Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով ընթացակարգի արդյունքում <<Վարուխ>> ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել երեք չափաբաժիններում և 11.07.2019թ.-ին Ջրային կոմիտեի և <<Վարուխ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա պայմանագիրը (կցվում է): Ընթացակարգը կազմակերպել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1523-Ն որոշմամբ հաստատվել են ֆինանսական

միջոցներ: Կոմիտեն 13.11.2019թ. էլեկտրոնային եղանակով <<Վարուխ>> ՍՊԸ-ին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը, սակայն <<Վարուխ>> ՍՊԸ-ն հրաժարվել է համաձայնագիր կնքել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8-րդ կետի 8.13 ենթակետը՝ Կոմիտեն նախատեսված ժամկետի ավարտից հետո (տասնհինգ աշխատանքային օր) 2019 թվականի դեկտեմբերի 5-ին միակողմանի լուծել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագիրը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ 30.01.2020թ.-ին տեղեկագրում հրապարակվել է ծանուցում՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին (կցվում է):»:

«Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2020թ. N 01.1/26-1/1378-2020 և ի լրումն Ջրային կոմիտեի 03.02.2020թ. N 03/17/299-20 գրությունների, կից ներկայացնում եմ <<Վարուխ>> ՍՊԸ-ի վերաբերյալ պահանջվող լրացուցիչ տեղեկատվությունը:»:

3. <u>«Վարուխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վարուխ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2019-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 03.02.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում Ջրային Կոմիտեի (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Վարուխ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՅ-ԼՕ-2020/50 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ըստ Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի վկայակոչած հիմքերի՝ Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով

ընթացակարգի արդյունքում <<Վարուխ>> ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել երեք չափաբաժինների մասով և 11.07.2019թ.-ին Ջրային կոմիտեի և <<Վարուխ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա պայմանագիրը (կցվում է): Ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այուհետև նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1523-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ: Կոմիտեն 13.11.2019թ. էլեկտրոնային եղանակով <<Վարուխ>> ՍՊԸ-ին է ուղարկել կնքվելիք համաձայնագրի նախագիծը, սակայն <<Վարուխ>> ՍՊԸ-ն հրաժարվել է համաձայնագիր կնքել: Պատվիրատուն նաև հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այուհետև նաև՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8-րդ կետի 8.13 ենթակետը՝ Կոմիտեն նախատեսված ժամկետի ավարտից հետո (տասնհինգ աշխատանքային օր) 2019 թվականի դեկտեմբերի 5-ին միակողմանի լուծել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած գրավոր հիմքերը հայտնում ենք, որ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր կարծիքի համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Պատվիրատուն 05.13.2019թ.-ին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրապարակել է թիվ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Մրցույթ): ՈՒսումնասիրելով Մրցույթի հրավերը, այդ թվում հրավերով սահմանված կնքվելիք պայմանագրի նախագիծը և հրավերի փաթեթում ներառված մյուս փաստաթղթերը Ընկերությունը ներկայացրել է Մրցույթին մասնակցելու հայտ:

1.2. Մրցույթի հրավերին կից նախագծերի փաթեթում ներառված 3-րդ, 6-րդ և 12-րդ չափաբաժինների տեխնիկական մասնագրերի 4-րդ գլխի 4.1 կետի համաձայն. <<Նախքան աշխատանքների սկիզբը Պատվիրատուն պետք է կազմի և փոխանցի Կապալառուին շինարարական աշխատանքների կատարման թույլատրությունը:>>

1.3. Մրցույթի արդյունքում 3-րդ (սպորգետնյա հորատման աշխատանքներ - Զարթոնք համայնքի խորքային հորի հորատման աշխատանքներ), 6-րդ (սպորգետնյա հորատման աշխատանքներ - Երասխահուն համայնքի խորքային հորի հորատման աշխատանքներ) և 12-րդ (սպորգետնյա հորատման աշխատանքներ - Արտաշար համայնքի խորքային հորի վերականգնման աշխատանքներ) չափաբաժինների մասով Ընկերությունը

ճանաչվել է հաղթող: Եվ այդ չափաբաժինների մասով 11.07.2019թ.-ին Պատվիրատուի ու Ընկերության (այսուհետև նաև՝ Կողմեր) միջև կնքվել է թիվ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պայմանագիրը (այսուհետև նաև՝ Պայմանագիր), որով նախատեսվում է կատարել կապալային՝ շինարարական աշխատանքներ:

1.4. Պայմանագիրը կնքվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրի 8.13 կետի համաձայն <<8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է>>:

1.5. 13.11.2019թ-ին Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել է Ընկերությանը թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր), որով նախատեսվում են ֆինանսական միջոցներ Պայմանագրով նախատեսված կապալային՝ շինարարական աշխատանքների կատարման համար:

1.6. Պայմանագրի կնքման և համապատասխան Համաձայնագիր կնքելու ծանուցման ժամանակահատվածում Պատվիրատուն չի տրամադրել ընկերությանը շինարարական աշխատանքների կատարման թույլտվությունները (շինարարության թույլտվությունները) և ջրօգտագործման թույլտվությունները:

1.7. www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում չի հրապարակվել:

2. Պատվիրատուի գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. ՀՀ Ջրային օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ ջրօգտագործում է համարվում՝ ջրային ռեսուրսից ջուր վերցնելը, այդ թվում՝ սփորերկրյա քաղցրահամ ջուր արդյունահանելը կամ այլ եղանակով նվազեցնելը:

ՀՀ Ջրային օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Յանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից:

Ըստ Պայմանագրի, Պատվիրատուի առաջադրանքով Ընկերությունը պետք է կատարեր հորատման աշխատանքներ: Հորատման աշխատանքների նպատակն էր ջուր արդյունահանելը: Ինչպես հետևում է վերը նշված նորմերից, ջուր արդյունահանելը համարվում է ջրօգտագործում, իսկ ջրօգտագործում իրականացնող յուրաքանչյուր ոք պետք է ունենա ջրօգտագործման թույլտվություն:

Այսինքն, հորատման աշխատանքները իրականացնելու օրինական հիմքը ապացուցելու համար Պատվիրատուն պետք է ունենար ջրօգտագործման թույլտվություն, քանի որ այդ աշխատանքները իրականացնելը ինքնանպատակ չէ, այլ ուղղված է ջուր արդյունահանելուն: Հետևաբար, առանց ջրօգտագործման թույլտվության Պատվիրատուի մուտ հորատման աշխատանքներն իրականացնելու օրինական հիմքը բացակայում է, այդ իսկ պատճառով առանց ջրօգտագործման թույլտվության Պատվիրատուն իրավունք չունի հանձնարարել Ընկերությանը իրականացնել հորատման աշխատանքները:

Վերոգրյալից նաև կարող ենք գալ այն եզրահանգման, որ հորատման աշխատանքները ջրօգտագործման թույլտվության բացակայության պայմաններում կատարելը խախտում է ՀՀ Ջրային օրենսգրքով սահմանված նորմերը, իսկ ինչպես սահմանված է ՀՀ Ջրային օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ օրենսգրքի պահանջների խախտմամբ կնքված գործարքներն անվավեր են: Ավելին՝ ՀՀ Ջրային օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանված է, որ օրենսգրքի 113-րդ հոդվածում նշված գործարքները կատարելու համար մեղավոր անձինք օրենսդրությամբ սահմանված կարգով կրում են քրեական կամ վարչական պատասխանատվություն:

Հաշվի առնելով վերը նշվածը և այն, որ Պատվիրատուն չի ներկայացրել Ընկերությանը ջրօգտագործման թույլտվությունները՝ Ընկերությունը աննպատակահարմար է համարել Համաձայնագրի կնքումը և հրաժարվել է այն կնքելուց:

Համաձայնագիրը Կողմերի միջև կնքվելու դեպքում «Վարուխ» ՍՊԸ -ն պարտավոր էր լինելու իրականացնել Պայմանագրով նախատեսված հորատման աշխատանքները առանց ջրօգտագործման թույլտվության առկայության,իսկ դա, ինչպես պարզեցինք վերոգրյալով, հանգեցնելու էր ՀՀ Ջրային օրենսգրքի 113-րդ և 114-րդ հոդվածներով սահմանված հետևանքներին:

2.2. Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Կառուցապատողները պարտավոր են՝ գ) քաղաքաշինական գործունեություն (բացառությամբ սույն օրենքի 23 հոդվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն. <<Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն (...):

(...)

Շինարարության թույլտվություն չի պահանջվում Կառավարության սահմանած ցանկում ներառված (...) ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար,(...):>>:

Ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակագրում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների) ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով՝ համաձայն նույն որոշման N 4 հավելվածի:

Վերը գրված նորմերի համաձայն՝ Կառուցապատողները (Պայմանագրի սահմաններում նաև Պատվիրատուն) պարտավոր են շինարարական աշխատանքները իրականացանել միայն այն դեպքում, երբ ունեն այդ շինարարական աշխատանքների կատարման համար տրված շինարարության թույլտվություն, բացառություն են կազմում այն շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել առանց շինարարության թույլտվության: Առանց շինարարության թույլտվության կարող են իրականացվել բացառապես այն աշխատանքները, որոնք ընդգրկված են ՀՀ Կառավարության 596-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված ցածր ռիսկայնության աստիճանի շինարարական աշխատանքների ցանկում:

Մրցույթի հրավերին կից նախագծերի փաթեթում ներառված 3-րդ, 6-րդ և 12-րդ չափաբաժինների տեխնիկական մասնագրերի 4-րդ գլխի 4.1 կետի համաձայն. <<Նախքան աշխատանքների սկիզբը Պատվիրատուն պետք է կազմի և փոխանցի Կապալառուին շինարարական աշխատանքների կատարման թույլատրությունը:>>Վերը նշված մրցույթի հրավերին կից փաստաթղթի բովանդակությունից կարող ենք գալ այն եզրահանգման, որ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է շինարարության թույլտվություն, ընդ որում Պատվիրատուն պարտավորվել է այն ներկայացնել նախապես:

Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար շինարարության թույլտվության անհրաժեշտության մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ.

Այդ աշխատանքների հիմնական ծավալները դուրս են ՀՀ Կառավարության 596-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված ցածր ռիսկայնության աստիճանի շինարարական աշխատանքների ցանկից: Մասնավորապես՝ Պայմանագրով նախատեսված <<Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման (...)>>, <<Հորատանցքի հորատում (...)>> աշխատանքները և ոչ միայն դրանք, ներառված չեն ՀՀ Կառավարության 596-Ն որոշման N 4 հավելվածով հաստատված ցածր ռիսկայնության աստիճանի շինարարական աշխատանքների ցանկում:

Շինարարության իրականացման համար Մրցույթով ներգրավվել են շինարարության իրականացման լիցենզիա ունեցող անձինք:

Ամփոփելով Հայցադիմումի 2.2. կետը գալիս ենք այն եզրահանգման, որ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է շինարարության թույլտվություն և այդ թույլտվությունը Պատվիրատուն պարտավորվել էր Ընկերությանը ներկայացնել նախապես: Սակայն ինչպես նշված է գործի համար էական նշանակություն ունեցող փաստերում, Պատվիրատուն այդ թույլտվությունը Պայմանագիրը կնքելու օրվանից ի վեր Ընկերությանը չի ներկայացրել: Այդ հանգամանքը կարող է վկայել միայն այն մասին, որ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման շինարարության թույլտվությունը բացակայում է: Իսկ շինարարության թույլտվության բացակայության պայմաններում Պատվիրատուն իրավունք չունի սկսել շինարարական աշխատանքները, այդ թվում՝ հանձնարարել Ընկերությանը կատարել դրանք:

2.3. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. << 6. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: (...)>>:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն. <<8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: (...):>>

Վերը նշվածից հետևում է, որ գնման ընթացակարգի արդյունքում մինչև պատվիրատուի կողմից ֆինանսական միջոցներ նախատեսելը, կարող է կնքվել աշխատանքների կատարման պայմանագիր: Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական

միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագրի կողմերի՝ պատվիրատուի և կապալառուի միջև կնքվում է համաձայնագիր, որով վերջիններս այդ պայմանագրում կատարում են փոփոխություն և պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսում են ֆինանսական միջոցներ: Եվ միայն ֆինասական միջոցներ նախատեսվելուց և այդ համաձայնագիրը կնքելուց հետո է, որ կապալառուի մոտ առաջանում է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման պարտավորություն:

Վերոգրյալից հետևում է, Պայմանագրի 8.13 կետով նախատեսված համաձայնագիրը կնքելու և Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսելու համար որոշիչ պայման է հանդիսանում ֆինանսական միջոցներ նախատեսելը: Նաև հարկ ենք համարում նշել, որ ֆինանսական միջոցները պետք է նախատեսվեն օրինական, քանի որ իրավական պետությունում պետք է բացառվի այլընտրանքային մոտեցումը:

Կարգի 10-րդ և 19-րդ կետերի համաձայն.

<<10. Սույն կարգի իմաստով շինարարական ծրագրերը ներառում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա իրականացվող բոլոր տիպի շինարարական աշխատանքները:

19. Շինարարական ծրագրերի գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա, (...):>>:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 101-րդ կետի համաձայն. <<101. Իրավասու մարմնի կողմից համաձայնեցվելուց և շինարարության թույլտվությունը տրամադրվելուց հետո նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, (...):>>:

Կարգի և ՀՀ Կառավարության 596-Ն որոշման նորմերից հետևում է, որ շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքների համար, Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, կնքված պայմանագրերով ֆինանսական միջոցներ կարող են նախատեսվել միայն այդ աշխատանքների համար շինարարության թույլտվություն տրամադրելուց հետո: Սակայն, ինչպես պարզեցինք այս հայցադիմումի 2.2 կետով, Պայմանագրով սահմանված աշխատանքների շինարարության թույլտվությունը Պատվիրատուի մոտ բացակայում է: Հետևաբար նշվածից կարող ենք եզրահանգել, որ

13.11.2019թ-ին Պատվիրատուն իրավունք չուներ Պայմանագրով նախատեսված աշխատանքների համար նախատեսել ֆինանսական միջոցներ, առավել ևս սկսել, ինչպես նաև Ընկերությանը հանձնարարել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը: ՈՒրեմն 13.11.2019թ-ին Պատվիրատուն նաև իրավունք չուներ Ընկերությանը ուղարկել և Ընկերությունից պահանջել կնքել Պայմանագրի 8.13 կետով սահմանված ֆինանսական միջոցներ նախատեսվելու մասին համաձայնագիրը:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1523-Ն որոշմամբ սահմանված նորմերը չեն կարող գերակայել Կարգի 10-րդ և 19-րդ կետերով սահմանված նորմերի նկատմամբ, քանի որ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում կիրառվում են ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը: Այդ իսկ պատճառով տվյալ դեպքում ենթակա են կիրառման Կարգի 10-րդ և 19-րդ կետերը:

2.5. Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ Պատվիրատուի մոտ բացակայում են Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ջրօգտագործման թույլտվությունը, շինարարության թույլտվությունը և շինարարության թույլտվության բացակայության պայմաններում նաև Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսելու իրավունքը:

Վերը նշված հանգամանքների պատճառով է, որ Ընկերությունը աննպատակահարմար է համարել Համաձայնագիրը կնքելը և հրաժարվել է այն կնքելուց, քանի որ Պայմանագրով սահմանված աշխատանքները օրինական հիմքով իրականացնելու համար անհրաժեշտ են ջրօգտագործման թույլտվություն, շինարարության թույլտվություն և օրինական հիմքով նախատեսված ֆինանսական միջոցներ:

Ջրօգտագործման թույլտվությունը և շինարարության թույլտվությունը Ընկերությանը պետք է տրամադրեր պատվիրատուն:

2.6. Ընթացակարգը նախաձեռնելու համար ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրած գրավոր հիմքերով Պատվիրատուն նաև հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8-րդ կետի 8.13 ենթակետը՝ Կոմիտեն նախատեսված ժամկետի ավարտից

հետո (տասնհինգ աշխատանքային օր) 2019 թվականի դեկտեմբերի 5-ին միակողմանի լուծել է ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

Սակայն հայտնում ենք, որ 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Տեղեկագրում Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցում Պատվիրատուն չի հրապարակել:

Հետևաբար 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Պայմանագիրը միակողմանի չի լուծվել և Պատվիրատուի վերը նշված պնդումը չի համապատասխանում իրականությանը: Բացի այդ, Պատվիրատուն չի ներկայացրել որևիցէ ապացույց, որով ապացուցվում է 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Տեղեկագրում Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակելու փաստը:

3. Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական հիմքերը բացակայում են: Անգամ եթե հաշվի չառնենք այդ հանգամանքը, Պատվիրատուն Ընթացակարգը նախաձեռնելուն ուղղված գործողությունները կատարել է՝ խախտելով Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետները:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և 50-րդ հոդվածի պահանջներով Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Վարուխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2020/50 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ջրային կոմիտեի և «Վարուխ» ՍՊԸ-ի միջև 11.07.2019թ.-ին կնքվել է թիվ «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի առարկայի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է կատարել Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով

նախատեսված՝ ստորգետնյա խորքային հորի հորատման և վերականգնման աշխատանքները:

Պայմանագրով սահմանվել է նաև, որ նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեք մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ Զարթոնք համայնքի խորքային հորի հորատման աշխատանքների համար՝ 38 օր, Երասխահուն համայնքի խորքային հորի հորատման աշխատանքներ համար՝ 40 օր և Սրտաշար համայնքի խորքային հորի վերականգնման աշխատանքներ համար՝ 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված թիվ 2):

Հավելված թիվ 2-ի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբը սահմանվել է կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

ՀՀ կառավարության 31.10.2019թ. թիվ 1523-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Պատվիրատուն 13.11.2019թ.-ին էլեկտրոնային եղանակով «Վարուխ» ՍՊԸ-ին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

ՀՀ ջրային կոմիտեի և «Վարուխ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

Մասնակիցը 02.12.2019թ.-ի Պատվիրատուին ուղղված թիվ 001 գրությամբ հայտնել է, որ մինչև օրս Ջրային կոմիտեի կողմից «Վարուխ» ՍՊԸ-ին չի տրամադրվել տվյալ

աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ջրօգտագործման թույլտվությունները, որպիսի պայմաններում համաձայնագիրը կնքելը գտել են աննպատակահարմար և առկա պայմաններում հրաժարվել են այն կնքել:

Պատվիրատուն 21.01.2020թ.-ին թիվ 03/17/127-20 գրությամբ Մասնակցին հայտնել է, որ «Վարուխ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ջրօգտագործող և Պայմանագրով՝ Ընկերությանը ջրօգտագործման թույլտվության տրամադրման պարտավորություն և իրավունք կողմերի համար չի առաջանում: Պայմանագրով նշված աշխատանքների կատարման համար կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են սպառիչ և անհրաժեշտ է առաջնորդվել Պայմանագրի դրույթներով:

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ ջրային կոմիտեի և «Վարուխ» ՍՊԸ-ի միջև 11.07.2019թ.-ին կնքված թիվ «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ջրային կոմիտեի կողմից 05.12.2019թ.-ին միակողմանի լուծվել է, հիմք ընդունելով Պայմանագրերի 8.13 կետի պահանջները:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2019-2020 գրությամբ «Վարուխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պա մանագրով սահմանված կարգուի նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ' պայմանագիր} թիվ 1 հավելվածով սահմանված ծուվալաթերթ-նախահաշվով նախատեսված' ստորգետնյա խորքային հորի հորատման և վերականգնման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք). իսկ Պատվիրատուն պարտավորվում Լ ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշ|ին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեք մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ Զարթոնք համայնքի խորքային հորի հորատման աշխատանքների համար՝ 38 օր, Երասխահուն համայնքի խորքային հորի հորատման աշխատանքներ համար՝ 40 օր և Սրտաշար համայնքի խորքային հորի վերականգնման աշխատանքներ համար՝ 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ ջրային կոմիտեի և «Վարուխ» ՍՊԸ-ի միջև 11.07.2019թ.-ին կնքված թիվ «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով պետական գնման Պայմանագրի առարկայի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է կատարել Պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ ստորգետնյա խորքային հորի հորատման և վերականգնման աշխատանքները:

Պայմանագրով սահմանվել է նաև, որ նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ Զարթոնք համայնքի խորքային հորի հորատման աշխատանքների համար՝ 38 օր, Երասխահուն համայնքի խորքային հորի հորատման աշխատանքներ համար՝ 40 օր և Սրտաշար համայնքի խորքային հորի վերականգնման աշխատանքներ համար՝ 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված թիվ 2):

Հավելված թիվ 2-ի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբը սահմանվել է կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լածվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

ՀՀ կառավարության 31.10.2019թ. թիվ 1523-Ն որոշմամբ հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Կոմիտեն 13.11.2019թ. էլեկտրոնային եղանակով «Վարուխ» ՍՊԸ-ին ուղարկել է կնքվելիք համաձայնագրի նախագիծը:

ՀՀ ջրային կոմիտեի և «Վարուխ» ՍՊԸ-ի միջև համաձայնագիր չի կնքվել:

Մասնակիցը 02.12.2019թ.-ի Պատվիրատուին ուղղված թիվ 001 գրությամբ հայտնել է, որ մինչև օրս Ջրային կոմիտեի կողմից «Վարուխ» ՍՊԸ-ին չեն տրամադրվել տվյալ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ջրօգտագործման թույլտվությունները, որպիսի պայմաններում համաձայնագիրը կնքելը գտել են աննպատակահարմար և առկա պայմաններում հրաժարվել են այն կնքել:

Պատվիրատուն 21.01.2020թ.-ին թիվ 03/17/127-20 գրությամբ Մասնակցին հայտնել է, որ «Վարուխ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ջրօգտագործող և Պայմանագրով՝ Ընկերությանը ջրօգտագործման թույլտվության տրամադրման պարտավորություն և իրավունք կողմերի համար չի առաջանում: Պայմանագրով նշված աշխատանքների կատարման համար

կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են սպառիչ և անհրաժեշտ է առաջնորդվել Պայմանագրի դրույթներով:

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ ջրային կոմիտեի և «Վարուխ» ՍՊԸ-ի միջև 11.07.2019թ.-ին կնքված թիվ «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ջրային կոմիտեի կողմից 05.12.2019թ.-ին միակողմանի լուծվել է, հիմք ընդունելով Պայմանագրերի 8.13 կետի պահանջները:

Սույն գործի փաստերի, մասնավորապես՝ Պատվիրատուի 21.01.2020թ.-ին թիվ 03/17/127-20 գրության հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, «Վարուխ» ՍՊԸ-ն, օբյեկտիվորեն հնարավորություն ունենալով կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, հրաժարվել է դրանք կատարելուց, հրաժարվել է համաձայնագիր կնքելուց, որի արդյունքում խախտվել են Պայմանագրի 8.13 կետի դրույթներով սահմանված պայմանները:

Պատվիրատուի 21.01.2020թ.-ին թիվ 03/17/127-20 գրությամբ հստակ նշվել է, որ Մասնակիցը չի հանդիսանում ջրօգտագործող և Պայմանագրով՝ վերջինիս համար ջրօգտագործման թույլտվության տրամադրման պարտավորություն և իրավունք կողմերի համար չի առաջանում, ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Մասնակիցը պետք է առաջնորդվեր Պայմանագրի դրույթներով և կատարեր պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որոնք Պայմանագրով սահմանված են սպառիչ կերպով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Վարուխ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 05.12.2019թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Անդրադառնալով Մասնակցի ներկայացրած այն փաստարկներին, համաձայն որոնց՝ Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 05.12.2019թ.-ին, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարություն 03.02.2020թ.-ին՝ խախտելով Կարգի 45-րդ

կետի դրույթներով սահմանված հինգ աշխատանքային օրյա ժամկետը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոհիշյալ իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 45-րդ հոդվածով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, սույն դեպքում՝ 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը, ի հայտ կարող է գալ միայն Պատվիրատուի կողմից Պայմանագրի 8.9 կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջի պահպանմամբ: Հակառակ դեպքում Պայմանագիր կնքած անձը (Մասնակիցը) չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ՝ պայմանագիրը չի կարող համարվել լուծված (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ եկած), հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ

նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վարուխ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2019-2020 գրությամբ «Վարուխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/50 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վարուխ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ